ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/49

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի տնօրեն

Հ. Հովակիմյանի (պետական գրանցման վկայական՝ 02Ա 046015)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.05.2019թ. թիվ 26/26-1/7940-2019 գրությամբ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 07.05.2019թ. թիվ ՊՆ/02/497-2019 գրության հիման վրա, 15.05.2019թ. թիվ 26/26-1/7940-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն 22.05.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 27.02.2019 հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով բաց մրցույթ, որի գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անվադողերի և մարտկոցների ձեռքբերումը:

2019թ. ապրիլի 29-ին պաշտպանության նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել պայմանագիր կնքելու մասին: Որոշման մեջ նշված է որ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05,2017թ-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշեց մերժել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը հայտնել է, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն բանավոր տեղեկացվել է, որ պաշտպանության նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը դիմել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պահանջով:

Ընկերությունը գտնում է, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պետք է չներառվի հետևյալ պատճառաբանությամբ.

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական հիմնավորումները՝

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ

գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընկերությունը նշել է, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն չի հրաժարվել որակավորման փաստաթղթերը ուղարկելու պարտավորությունից, այլ տեղի է ունեցել տեխնիկական խնդիր, որի արդյունքում փաստաթղթերն ուղարկվել են ապրիլի 22-ի փոխարեն ապրիլի 25-ին:

Տեխնիկական խնդիր է հանդիսանում հանձնաժողովի քարտուղարի ուղարկած էլեկտրոնային նամակի Junkmail-երում հայտնվելը, որի հետ կապված Ընկերությունը ունի ապացույցներ՝ կից ներկայացնելով այն:

Այն մասին, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն զբաղեցրել է 1-ին տեղը 16, 23, 26, 28-րդ չափաբաժիններով Ընկերությունը տեղեկացել է ՀՀ ֆինանսների նախարարության http://gnumner.am պաշտոնական կայքից, որտեղ ապրիլի 23-ին մուտք անելով մրցույթի ծածկագիրը տեսել է հայտերի բացման նիստի արձանագրությունը, որից հետո ուսումնասիրելով «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի գնումների համակարգողի Tender@LavAvto.am էլեկտրոնային փոստի «Junkmail» բաժինը հայտնաբերել է ՊՆ համապատասխան նամակը:

Քանի որ ապրիլի 24-ը հանդիսանում է սգո օր և ոչ աշխատանքային է, ապրիլի 25-ին վաղ առավոտից պատրաստել է որակավորման փաստաթղթերը և ուղարկվել է համապատասխան հասցեով:

Ընկերությունը հայտնել է, որ հանձնաժողովի քարտուղարը «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ ծանուցումը էլ. փոստով ուղարկել է 25.04.2019թ. 18:54-ին, մինչդեռ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ուղարկել է 25.04.2019թ. 17:26-ին, այսինքն նախքան հայտի մերժման մասին ծանուցում ստանալը (կից ներկայացվում է էլ. փոստից արված 2-րդ և 3-րդ նկարները), ինչպես նաև վերը նշված պատասխանատու անձը Ընկերությանը հեռախոսով չի զգուշացրել որակավորման փաստաթղթերի ուղարկման մասին, չնայած նրան, որ բազմաթիվ հասանելի հեռախոսահամարներ են տրամադրված, ընդհուպ կազմակերպության գլխավոր տնօրենի:

Ընկերությունը գտնում է, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ուղարկել է նախքան մերժման մասին ծանուցումը ստանալը, հետևապես գնահատող

հանձնաժողովի պատճառաբանությունը, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ընդհանրապես չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը անհիմն է:

Ընկերությունը նշել է, որ ֆորմալ պայմանով «Հույս-Մոտոր» ՍՊ Ընկերության և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից որպես վերը նշված չափաբաժիններով հաղթող չճանաչելը բերում է մի շարք անցանկալի հետևանքների, այն է՝ ինչպես ՀՀ պետական բյուջեի ավելացած ծախսերի մասով, այնպես էլ առողջ մրցակցային դաշտի փլուզմամբ և Ընկերության գործարար համբավի վրա ստվերի գցմամբ:

Վերը նշված չափաբաժիններով որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված «Հույս-Մոտոր» ՍՊ ընկերության կողմից առաջարկվող ապրանքների մատակարարման գինը կազմում է 1.769.200 ՀՀ դրամ, (ներառյալ ԱԱՀ), իսկ երկրորդ տեղ ճանաչված կազմակերպության առաջարկած գինը կազմել է 2.627.080 ՀՀ դրամ, (ներառյալ ԱԱՀ), այսինքն բյուջեի ծախսը վերը նշված չափաբաժիններով ավելանում է 50 տոկոսից ավելի, այն է՝ 857.880 ՀՀ դրամով (ներառյալ ԱԱՀ):

Ընկերությունը հայտնել է, որ հիմք ընդունելով վերոգրյալը, «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն 07.05.2019թ. բողոք է ներկայացրել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, ՀՀ ՊՆ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 29-ի թիվ 1.3 որոշման դեմ՝ խնդրելով արգելել պայմանագիր կնքել 16, 23, 26, 28-րդ չափաբաժիններով «Արպանիվ» ՍՊԸ-ի հետ և վերականգնել Ընկերության իրավունքները հաղթող ճանաչված չափաբաժինների մատակարարման մասով:

Ընկերությունը հայտնել է, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն չի հրաժարվել որակավորման փաստաթղթերը ուղարկելու պարտավորությունից, այլ վերը նշված տեխնիկական խնդրի պատճառով փաստաթղթերը ուղարկվել է ապրիլի 22-ի փոխարեն ապրիլի 25-ին, հաշվի առնելով ներառյալ մեկ ոչ աշխատանքային օրը:

Պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/49 ընթացակարգի շրջանակներում 23.05.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ՝ Ընկերության տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.05.2019թ. թիվ ՊՆ/022/497-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով բաց մրցույթի 16-րդ, 23-րդ, 26-րդ և 28-րդ չափաբաժինների մասով «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով մասնակցին armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ընդհանրապես փաստաթղթեր չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել է վերջինիս հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/49 ընթացակարգի շրջանակներում 23.05.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2019/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուն ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անվադողերի և մարտկոցների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀՊՆ-ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ4/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 16-րդ, 23-րդ, 26-րդ և 28-րդ

չափաբաժինների մասով «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

3. «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն 17.04.2019թ. էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

4. «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը Պատվիրատուին ուղարկվել են 25.04.2019թ. ժամը 17:46-ին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.04.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 16-րդ, 23-րդ, 26-րդ և 28-րդ չափաբաժինների մասով մերժել է «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս ընդհանրապես չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.05.2019թ. թիվ 26/26-1/7940-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.05.2019թ. թիվ ՊՆ/022/497-2019 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի 22.05.2019թ. գրությունը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին

համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը եկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անվադողերի և մարտկոցների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀՊՆ-ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ4/1» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 16-րդ, 23-րդ, 26-րդ և 28-րդ չափաբաժինների մասով «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

«Հույս Մոտոր» ՍՊԸ-ն 17.04.2019թ. էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված թիվ 4-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.04.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 16-րդ, 23-րդ, 26-րդ և 28-րդ չափաբաժինների մասով մերժել է «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ որ վերջինս ընդհանրապես չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ

մասնակիցը կամ ***<u>առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում</u>***»:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը, արձանագրում եմ հետևյալը.

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը եկտրոնային փոստի միջոցով ***ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից <u>երեք աշխատանքային օրվա ընթացքում</u> էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը***, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: ***Սույն մասով <u>սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում</u> հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի

հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Այսպիսով, արձանագրում եմ, որ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն 17.04.2019թ. ծանուցվելով որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ***երեք աշխատանքային օրվա*** ընթացքում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետից հետո՝ 25.04.2019թ. ժամը 17:46-ին), որի հետևանքով Ընկերությունը խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցման: Ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.05.2019թ. թիվ 26/26-1/7940-2019 գրությամբ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Հույս Մոտոր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**